

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐ

Մա՛յր իմ, եկել եմ քո հողաթըմբի առաջ ծունկ
 չոքել,
 եւ կարօտալու աղաչում եմ քեզ խոր քննեց
 վեր կա՛ց:
 Քո շուրջը նայիր, տես ի՛նչ փառահեղ դարդեր
 են հաղել
 Մեր ուսանները, սար ու ձորերը, դաշտերը
 ծաղկած:
 Ե՛կ մեզ հետ տօնի՛ր յաղթանակները մեր մեծ
 աշխարհի,
 Ու հարօտանեկան թաշկինակը ա՛ռ հարսիդ հետ
 պարի՛ր,
 Քո շուրթով ըմպի՛ր մեր հերթանկութեան աղբիւ-
 րից մի թաս,
 եւ այն ժամանակ դու է՛լ չես մեռնի, դու կ՛ան-
 մահանաս:

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՐԶԱՆ

ԻՐԻԿՆԱՅԻՆ

Դաշտի վերայ իջել է իրիկնային մի մըշուշ,
 Իրիկնային մըշուշում խոկում է հողը հիմայ,
 Հասկերն ասեւ պատմում են մոռացուած քաղցրը
 մի յուշ,
 Հասկերն այնպէս են շընշում որ երեկոն չիմանայ:
 Սայլերն ահա անցնում են երկար ու սուր ճը-
 ոինշով,
 — Օ՛ր, մի՛ յուզէք, մի՛ յուզէք նինջը խաղաղ
 դաշտերի.
 Հեռուից մի երգ է լըսում, դառնում ա՛յնքան
 հեշտ ու դով:
 Որ հասկերին, ծիւրերին անհուն օրօր կը լինի:
 Իրիկնային մըշուշում անցնում եմ ես օրօրուն,
 Հողը բերրի է ա՛յնքան, ա՛յնքան քնքուշ,
 անխըռով...
 Թըւում է ինձ որ հիմայ ես քայլում եմ ու գընում
 իմ պապերիս ըրթների ու սըրտերի վըրայով:
 Առուի եզրին ուռիներ թախծում են խոնջ ու
 սըրտում,

Ջուրը իր հեղ կարկաջով մի հէքաթ է քաղցրա-
 նուշ...

Մէկն անծանօթ բառերով փըսփըսում է իմ
 սըրտում,
 Հիւանքը, քո կեանքը անցալ, դարձաւ երգ ու
 վերյուշ:

Կտարներին սարերի արեւի շողը վըրջին
 Ուշում է իր համարյարով ողջ հորիզոնը հրդհեւ...
 Օ՛ր տունները, քիչ հեռուն, որոնց նիւհող պատե-
 րին,

Գաղջ երեկոն իր անդորրն ու մեծ խորհուրդն է
 սըփուել...

Դաշտի վըրայ իջել է իրիկնային մի մըշուշ,
 Իրիկնային մըշուշում խոկում է հողը հիմայ,
 Հասկերն ասեւ պատմում են մոռացուած քաղցրը
 մի յուշ,
 Հասկերն այնպէս են շընշում որ երեկոն չիմանայ:

ԽՈՂ

Սերմերը յանձնիր դու հողին,
 Մատները երբեք չըզոդան,
 Հարազատ հողն է քո ուղին,
 Զի դաւի հողը նախեան:

Հուտերը դառնան հասուն բերք,
 Ինչպէս տաք կուրծքը աղջկայ,
 Օրերը լինեն խինդ ու երգ,
 Օրերը ժպտին մեծ վաղուան:

Դու լըսի՛ր զարկին Մայր Հողի,
 Երբ բերքերը չընձեւ դու մի օր-
 նա ա՛յնքան խոհուն երգ ունի
 Քո բերքում, սըրտում թեւաւոր:

Սերմերը յանձնիր դու հողին,
 Մատները երբեք չըզոդան,
 Հարազատ հողն է քո ուղին,
 Զի դաւի հողը նախեան:

ՄԵՐ ՄԻՐՏԸ ՔԵՁ

Մեր սիրտը ահա բերել ենք մենք քեզ,
 Քո զարկի, տնդի, յոյգերի համար,
 Երազը մեր վառ մուկը երազիդ,
 Որ նա բարձրանայ, դառնայ երգ ու խինդ,
 Մեր սիրտը ահա բերել ենք մենք քեզ:

Երէկը մեր հին փըշըւեց այսօր...
Ապագան կանգնեց ներկայի առաջ,
Որպէս յաւերժի Մասիսը հըպարտ.
Գալիքի կանչով մենք դարձանք անյաղթ,
— է՛լ չենք ճանաչի ուրիշ ոչ մի կանչ...
Երէկը մեր հին փըշըւեց այսօր...

Ողջո՛յն քեզ, երկէ՛ր, լոյս ու արեւ քեզ,
Երգը քո ճակատին թող համբոյր լինի,
Արեւը քո դէմ միտն պայծառ մընայ,
Երգըդ հուր լինի ու յոյզըդ անմահ,
Իմ շունչն ու հողին գալիք երգերի,
Ողջո՛յն քեզ, երկէ՛ր, լոյս ու արեւ քեզ,

ԱՐԱՄ ԱՐՄԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Հայրենական դաշտերն են այս՝ ոտքերու տակ,
Կը հաւաքեմ բացուած վարդերն իմ երազիս,
Ու կը վազեմ, կը խոյանամ ես ծագէ ծագ,
Եւ ամէն շերտ հողի՛ լոյսին կը բանայ զիս...

Հայրենական ջուրերն են այս՝ ոտքերու տակ,
Ես կը լըսեմ վարարող երգը արիւնիս,
Ու կը լըցուիմ սիրոյ խնդովը բովանդակ
Եւ ալիքներ հեռուն կհանքին կը կանչեն զիս:

Հայրենական լեռներն են այս՝ ձիւներու տակ, —
Օ՛ր, ես կըրգամ բիւրեղ սըլացքն իմ հողիւս,
Ու ձեռքիս մէջ հազար արեւ ու յաղթանակ,
Միջոցէն վեր, դարերն ի վեր կը դռնեմ զիս:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Ձեռքերու մէջ, ձեռքերու մէջն ես դուն հիմայ,
Հայրենի՛ հող, ու կը չընչեմ քեզ մոլեգիւն, —
Քանի՛ դարեր փըշըւեցան սըրտիս վըրտայ,
Որ ես այսպէս ունենամ քո ափ մը փոշին:

Աէքերու մէջ ու կուրծքիս տակն ես դուն հիմայ,
Սըրբազան հող, ու կը զրկեմ քեզ խանդազին, —
Քանի՛ երազ ըսպանցին ես անխընայ,
Որ դուն ապրիս, որ ես հասնիմ քո երազին:

Երգերու մէջ ու կհանքիս մէջն ես դուն հիմայ,
Երազուա՛ծ հող, ու կը մեծնանք մենք միասին,
Թող աշխարհին քարացած խիղճը իմանայ
Թէ ես քեզմով արդէն տիրած եմ աշխարհին:

ԿԱԶԷԼ ՀԱՅՐԵՆԻ ՁՄՐԱՆ ՄԱՍԻՆ

Ծառերու ծեր, ձիւն դադաթով հարուստ եմ ես՝
Հաւատացէ՛ք,
Կհանքի ահեղ սա հէքեաթով հարուստ եմ ես՝
Հաւատացէ՛ք,
Որքան կ'ուզէ անձրեւը զայ ու տարածուի մահը
բուքին,
Իմ պապերու հին հաւատով հարուստ եմ ես՝
Հաւատացէ՛ք:

Ձրմեւը լի սեղան մըն է՝ օճախին շուրջ հայրե-
նական,
Օճախներու հարազատով հարուստ եմ ես՝
Հաւատացէ՛ք:
Դուրսը ամէն որոտ ու չեղբ՝ մեծ հըրաւէր մըն է
երգի,
Բանաստեղծի սա ճակատով հարուստ եմ ես՝
Հաւատացէ՛ք.
Ինծի ի՞նչ փոյթ թէ կայծակներ կը հրդեհուին
ամպերու տակ,
Արարատով, Արարատով հարուստ եմ ես՝ հա-
ւատացէ՛ք:

ԵՐԳԸ

Նայուածքներէդ, մաղերէդ ու հասակէդ սիրա-
կէզ,
Մընաց լոկ երգն այս ինծի, որպէս վերջին
բարութիւն.
Երգի մը պէս, յերգին չափ, տե՛ս՝ կը սերեմ հի-
մայ քեզ
Ու կը կըրեմ շրթներու վըրայ ըղբոյշ ու խոհուն:
Ինծի համար դուն արդէն մաքուր ու հեղ ես
ա՛յնպէս,
Ձունիս ո՛չ մէկ խըլըրուում դժգոհանքի մը թա-
քուն,